

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՆՈՐԱՅԱՅՏ ԵՐԿԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *

ՀՏԴ 82.09

DOI: 10.52063/25792652-2023.4.19-114

ՄԱՐՈ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտ,
Հայաստանի Հանրապետության նախագահի
աշխատակազմի ավագ մասնագետ,
ք. Աշտարակ, Հայաստանի Հանրապետություն

maroghukasyan.mg.mg@gmail.com

ORCID: 0009-0002-3867-7044

Սույն հոդվածով առաջին անգամ անդրադարձ է կատարվում Հակոբ Պարոնյանի՝ Կ. Պոլսի «Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերում հրատարակած նորահայտ երկերի ժանրային առանձնահատկություններին:

Հոդվածի նպատակն է ներկայացնել այդ նորահայտ երկերի ժանրային բնութագիրը:

Աշխատանքի խնդիրներն են «Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերում Հակոբ Պարոնյանի հրատարակած նորահայտ երկերի ժանրային վերլուծությունն ու ժանրային պատկանելության որոշումը: Դժվար և երբեմն էլ անհնար է հստակ որոշել երգիծական ստեղծագործության ժանրը, քանի որ երգիծանքը ներառում է գրեթե բոլոր գրական ժանրերի տարրերը: Եվ հատկապես բարդ է որոշել յուրօրինակ ձեռագիր ունեցող երգիծաբան Հակոբ Պարոնյանի գործերի ժանրային պատկանելությունը:

Հետազոտության համար կիրառվել է վերլուծական մեթոդը:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությանը՝ Հակոբ Պարոնյանի նորահայտ երկերը չունեն ընդգծված ժանրային նկարագիր, դրանք հիմնականում դրամատիկական և հրապարակախոսական ժանրերին հատուկ գծերով միջժանրային գործեր են:

Հիմնաբառեր՝ Հակոբ Պարոնյան, «Մեղու» երգիծաթերթ, «Թատրոն» երգիծաթերթ, նորահայտ երկեր, ժանր, դրամատիկական ժանր, հրապարակախոսական ժանր, ֆեյխետոն, մանրապատում, մենիպեոսյան երգիծանք:

Ներածություն

Գրական ժանրը գրողի գաղափարների, ստեղծագործական նպատակադրումների, մտահղացման արտահայտման որոշակի ձև է: Գրականության մեջ ձևի ու բովանդակության միասնության, ներդաշնակության և դրանց

* Հոդվածը ներկայացվել է 01.11.2023թ., գրախոսվել՝ 18.11.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2023թ.:

կարևորության մասին խոսվել է ոչ մեկ անգամ: Նույնիսկ մերօրյա հարափոփոխ ժամանակների և իրականության մեջ ստեղծվող գրականության համար այն ունի իր առաջնայնությունը, որքան էլ առկա է զուտ ըստ ձևի գրելու կամ, ընդհակառակը, ձևից, ժանրից հրաժարվելու միտումը: Գրականության տեսության մեջ գրական ժանրի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ և մեկնաբանություններ, ասել է թե՛ գրականության տեսաբանները միակարծիք չեն այս հարցում: Էդ. Ջրբաշյանը գրական ժանրերը սահմանում է որպես գրական երկերի ընդհանուր տիպեր, որոնք ունեն բովանդակության և ձևի համեմատաբար կայուն հատկանիշներ (Ջրբաշյան 342): Եղիշե Չարենցը, որն իր ստեղծագործությունները ենթարկել է հստակ ժանրային բաժանման, գրում է. «Թե որքան խախտու բան է «ժանր» հասկացողությունը, զուրկ գիտական որևէ օբյեկտիվ հատկանշից, ապացուցում է թեկուզ հենց այն հանգամանքը, որ ինքը Թումանյանը իր ժողովածուները կազմելիս շատ հաճախ միևնույն գրվածքը գետեղել է մերթ իբրև «լեգենդ», մերթ իբրև «հեքիաթ» և այլն, - և բոլոր դեպքերում էլ հավասար իրավունքով, որովհետև ամբողջ գրականագիտության մեջ չենք գտնի երկու հոգի, որ միևնույն բնորոշումը տալին պոեմին կամ բալլադին, պատմվածքին կամ վեպին...» (Չարենց 249):

Այդուհանդերձ, ժանրը ենթադրում է գրական երկի որոշակի սահմաններ, թեպետ գրողները կարող են երբեմն անտեսել դրանք: Նման դեպքերում գրողին ինքնաբերական արարումն ուղղորդում է դեպի միջժանրային այս կամ այն տեսակը: Սա հատկապես հաճախ է դրսևորվում երգիծաբանության մեջ: Գրականագետ, գրաքննադատ Յակով Էլսբերգը գրում է. «Գրականության տեսության համար երգիծաբանությունը վաղուց ի վեր գայթակղության քար է եղել: Անհայտ էր, թե ինչպես կարելի էր հաշտեցնել նրա առանձնահատկությունները գրական սեռերի ընդունված դասակարգմանը» (Յեռեբերգ 8): Ահա թե ինչու են առանձնապես երգիծաբանության մեջ հաճախ ստեղծվում «ժանրային հիբրիդներ», որոնց պատճառով հաճախ ենք դժվարանում երգիծաբանի երկի ժանրը որոշելիս:

Սույն հոդվածով կանոնադաշտանք Հակոբ Պարոնյանի նորահայտ երկերի ժանրային առանձնահատկություններին: Հստակեցնենք, թե նորահայտ ասելով՝ որ գործերը նկատի ունենք: Խոսքը մասնավորապես Կ. Պոլսի «Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերում դերանուն-ծածկանուններով (Ես, Դու, Այն, Ով է նե) և մի քանի այլ ծածկանուններով (Վառարան, Կարկուտ) լույս տեսած երկերի մասին է, որոնք տարիներ շարունակ չեն վերագրվել երգիծաբանին և չեն ընդգրկվել նրա երկերի լիակատար ժողովածուում: Այլևս չենք անդրադառնա հեղինակային պատկանելության հարցին, քանի որ գրականագետ Ալ. Մակարյանը հիմնավորապես ուսումնասիրել է այն և ապացուցել, որ այդ երկերի հեղինակը Պարոնյանն է (Մակարյան 65-94):

3. Պարոնյանի նորահայտ երկերի ժանրային առանձնահատկություններն ըստ Կ. Պոլսի «Մեղու» երգիծաթերթի

Հակոբ Պարոնյանի՝ Կ. Պոլսի «Մեղու» երգիծաթերթում 1873 թվականին լույս տեսած նորահայտ երկերը չունեն ժանրային բազմազանություն, դրանց բնորոշ է ուղղվածությունը դեպի դրամատիկական ժանրը: Երգիծաբանը հավանաբար դեռևս բովանդակությունն արտահայտելու համապատասխան ձևի, կառույցի որոնումների մեջ է եղել կամ էլ նպատակադրված անտեսել է ժանրերի հատկանշականությունները:

Այսպես՝ «Բարեկենդանեն առաջ» և «Թաղի մը խորհրդարանը» գործերը կարելի է համարել դրամատիկական ժանրի տարրերով մանրապատումներ կամ էլ փոքր պիեսներ՝ պիեսներին բնորոշ ոչ բոլոր տարրերով: «Բարեկենդանեն առաջ» մանրապատումում բացակայում է «Գործող անձինք» հատվածը, որտեղ սովորաբար ներկայացվում են կերպարների անունները և նրանց վերաբերյալ բնութագրական

կարճ արտահայտություններ: Կերպարներին ծանոթանում ենք հետևյալ ձևով և երկխոսությունների միջոցով.

«ՏԻԳ. Ի՛նչ աղէկ բան է պատմութիւն գիտնալը:

ԶԱՅ. Սրբազան պատմութիւն անելո՞րդ է:

ՏԻԳ. Ով հակառակը կ'ըսէ, Տէր Հայր, պատմութիւն ըսելով Սրբազանըն ալ մէջը կ'իմանամ:

ԶԱՅ. Սրբազանն արտաքինէն չէ՞ս գատեր:

ՏԻԳ. Ին՛չպէս չէ. Սրբազան պատմութիւնն Աստուծոյ ժողովուրդին պատմութիւնն է, իսկ արտաքինը...

ՎԱՐ. Սատանային:

ՏԻԳ. Սրբազան պատմութիւնն հրաշքով լի է ծայրէ ծայր, իսկ արտաքինն առասպելով» («Մեղու», թիվ 127):

Այս մանրապատումում որևէ նշում չկա գործողությունների, տեսարանների վերաբերյալ, գրեթե բացակայում է նաև հեղինակային խոսքը, միայն մի քանի տեղ փակագծերում կարդում ենք «Պատուհան վազելով», «Փողոցը կ'երգուի», «Ներս մտնելով» հեղինակային նշումները, ինչպես նաև մեկ ծանոթագրություն:

«Թաղի մը խորհրդարանը» դրամատիկական ժանրի գործ է հիշեցնում միայն «Վարագոյրը կը բացուի» և մի քանի այլ հեղինակային նշումներով ու աշխույժ երկխոսություններով: Այստեղ ևս գործողությունների և տեսարանների մասին գրառում չկա, կերպարների անունները նշված չեն այնպես, ինչպես «Բարեկենդանէն առաջ» մանրապատումում («Մեղու», թիվ 184):

«Մեղու» երգիծաթերթում գերակշռում են երգիծական մանրապատումները, որոնք ևս հաջորդական աշխույժ երկխոսություններով դրամատիկական ժանրի պատառիկներ են հիշեցնում.

«– Զա աղջիկ ինչո՞ւ համար նստեր դռմը դռմը կուլաս:

– Հէլպէտտէ պիտի լամ. հէլպէտ-պէտտէ պիտի հիւընդնամ, հէլպէտտէ թիֆօ պիտի ըլլամ, հէլպէտտէ պիտի մեռնիմ, հէլպէտտէ ձեր քեֆն ալ տեղը պիտի գայ:

– Զա ինչո՞ւ մեռնիս եավրում, քա՛ գավալը աղջիկ, քա մեղքը չէ՞ս, քա մի՛ լար եավրում մի՛ լար, վաղը քեզի հետ Պեյօղլու կերթանք ուզած շաբխադ կառնեմ, աչվըներդ սրբէ աղջիկս:

– Ֆիստանս աղւոր չէ, պաչիսա ֆիստաս ալ կուզեմ, հեմ ասոր կուզեմ քի Աւագ հինգշաբթի օրվան հասնի» («Շաբխա կուզեմ չէ՛ նէ հիմայ կը պօռամ») («Մեղու», թիվ 129):

Նմանատիպ մանրապատումներ են՝ «Կարդացող տերպապան», «Աւագ հինգշաբթի օրուան բանայիրը», «Չալըընիներու սովը», «Նորօրինակ վարդապետութիւն մը», «Հարսնախօսութիւն», «Մինակ մարդկութիւն եւ զգացում ունեցողը կը խփնի ու կը կարմրի», «Ալէմ տաղիի կռիւ մը», «Մեռելկոխի մը», «Անուշի կռիւ մը», «Ահարկու երազ մը», «Միշտ գմբեթին տակը», «Թացիկ Մարգար», «Համբարծում աղա Թայկարեան»:

Նորահայտ երկերի շարքում կան նաև ընդգծված հրապարակախոսական ակնարկներ, ավելի ստույգ կլինի ասել՝ տարբեր տեսակի ֆելիետոններ, ինչպես՝ «Աւագերեցութեան կռիւ մը», «Կրօնական ժողով եւ Ղազար վարդապետին խալքախը», «Խաբված խելացին», «Կամ յիսուն ոսկի կամ կես տուն»: Այս գործերին բնորոշ են շարադրանքի ազդու, խրատական ոճը, ժամանակի արդի խնդիրներին անդրադարձը, առածների, ասացվածքների գործածությունը:

«Պետքը մարդը հնարագետ կ'ընէ ըսած է փիլիսոփայ մը:

Յայտնի է որ ժամանակին գլխաւոր պէտքն ալ դրամն է:

Այս պէտքը ձեռք անցընելու համար մեր երիտասարդները զանազան միջոցներ գտած են և հետզհետէ ալ գտնելու վրայ են, վասն զի փնտռողը մեվլան ալ կը գտնայ պէլան ալ կ'ըսէ հասարակաց առածը:

Մեր ամուսնասեր երիտասարդներուն գտած նորանոր հնարքները շատ անգամ առիթ ունեցած ենք Մեղուին միջոցաւ հրատարակելու: Այս անգամ բարեծաղիկ երիտասարդ մ'ալ հետևեալ հնարքը գտեր է աղուորիկ կին մը և միանգամայն աղուորիկ ոսկիներ ձեռք անցընելու համար» («Կամ յիսուն ոսկի կամ կէս տուն») («Մեղու», թիվ 151):

Հակոբ Պարոնյանի շնորհիվ հայկական ֆեյիետոնը ժանրային հարուստ բովանդակություն և թեմատիկ ընդգրկունություն ստացավ՝ անդադառնալով կենցաղայինից մինչև քաղաքական խնդիրների: Տեսաբան Հասմիկ Մարգունին գրում է. «Պարոնյանի ֆեյիետոնների լեզուն կրքոտ հրապարակախոսական մտքի լեզու է՝ փաստերի, երևույթների երգիծական գունավորմամբ: Այն յի է բառախաղերով, կալամբուրով, փոխաբերական բառերով, համեմատություններով: Արտահայտման այդ արվեստը նույնպես դառնում է ֆեյիետոնի հատկություններից մեկը, կտրուկ ձևով տարբերելով այն թերթի և ամսագրի մնացյալ նյութերից: Ֆեյիետոնն իր հետագա զարգացման մեջ ևս բոլորովին չի հանդուրժում «գործնական արձակի», «թերթային լեզվի» շտամպը» (Ջրբաշյան և ուրիշներ 444):

«Մեղու» երգիծաթերթում լույս տեսած նորահայտ երկերի մեջ առանձնահատուկ է «Սուրհանդակ Մեղուի» շարքը, որն ընդգրկում է ինչպես երգիծական պատմվածքներ («Ծովաբաղնեբուժություն», «Պերեքթի տուն մը»), հրապարակախոսական ակնարկներ («Լրագրական կերակուր», «Աշխարհիս վերջը երբ պիտի գայ», «Լրագիր կարդացողները»), այնպես էլ հումորային իմաստալից կարճ հարց ու պատասխաններ: Այսպես՝

«- Ի՞նչ է ազատութիւնը:

- Հեղուկ մը, որ եթէ ամանի մը մէջ դրուած չըլլայ՝ կը թափի և կը կորսուի:

- Ինչ է դժբախտութիւն մը:

- Մեր ճշմարիտ բարեկամները մեր շողոքորթներէն որոշել տուող միակ միջոցը» («Մեղու», թիվ 161):

Ինչպես տեսնում ենք, «Մեղու» երգիծաթերթի նորահայտ երկերն ունեն հիմնականում դրամատիկական ժանրի գծեր, սակայն այս գործերից և ոչ մեկը չենք կարող համարել դրամա կամ կատակերգություն. սրանք միջժանրային գործեր են: Ժանրային առանձնահատկություններով տարբերվում են հիմնականում ֆեյիետոնները, որոնք, այնուամենայնիվ, կրկին կարող ենք որակել հիբրիդային ժանրի գործեր, քանզի կրում են երգիծաբանի ինքնատիպ ձեռագրի կնիքը և այդպիսով դուրս գալիս ֆեյիետոնի ժանրային սահմանագծից:

3. Պարոնյանի նորահայտ երկերի ժանրային առանձնահատկություններն ըստ Կ. Պոլսի «Թատրոն» երգիծաթերթի

Կ. Պոլսի «Թատրոն» երգիծաթերթում 1874-1877 թվականների ընթացքում Հակոբ Պարոնյանի լույս ընծայած նորահայտ երկերի շարքում նկատում ենք ժանրային հետաքրքիր կառույցներ: Այստեղ ևս կան երգիծական և հրապարակախոսական մանրապատումներ, այսպես՝ «Թահթա-Քալեի ազգ. հիւանդանոցը», «Սուրացկաններու ժողովը», «Լանկա պօսթանին. պախըճի պատուելի մը» (Ղուկասյան 167-177), «Խլավուզ Երանիկը»:

Շատ են նաև հասարակական արատավոր բարքերը ներկայացնող և պախարակող հրապարակախոսական գրառումները, ակնարկները, ինչպես՝ «Հակառակ կարծիք», «Լոնճայի Մարիամ տուտուն», «Սուրբ Մենեքշէ կամ Վանային նախանձընդդիմութիւն մը», «Խիստ որդեսէր մայր մը», «Ձայն»: «Խիստ որդեսէր մայր մը»-ն ֆեյիետոնային գրառում է՝ ուղղված ծնողական անտարբերության քննադատությանը: 12-ամյա տղան, որին մայրը թողել է գիշերօթիկ վարժատանը,

հիվանդանում է, իսկ անտարբեր, «գբսասեր» մայրը գալիս է որդուն տեսակցելու միայն այն ժամանակ, երբ արդեն խիստ ծանր է որդու վիճակը: Պարոնյանի ամփոփիչ խոսքը վերաբերում է «խիստ որդեսեր» մորը. «Տղուն վիճակն այժմ ըստ բժշկաց ցաւալի է և բժշկուելու անյոյս հարկաւ այս որդեսեր մայրն անհամբեր կսպասէ որ տղան ժամ մը յառաջ մեռնի որպէս զի՝ իր գբսասնքը շարունակէ ամենայն ցընծութեամբ» («Թատրոն», թիվ 67):

Հասարակական արատավոր մի երևույթի՝ «թրախումայի» դեմ է հրապարակախոս Պարոնյանի շատ հակիրճ «Հակառակ կարծիք» ակնարկը՝ ֆեյլիտոնային տարրերով: Այն օրերի Պոլսում թրախուման՝ դրամաժիտը, կարևոր հանգամանք էր աղջկա ամուսնության համար, շատ ավելի կարևոր, քան նրա ուսումն ու կրթությունը: Երգիծաբանը ցավով և հեգնանքով գրում է. «...աղջկան մը դաստիարակութիւնն ու ուսմունքը ամուսնական կապը չ'ամրապնդէր, որչափ կ'ամրապնդէ թրախումայի առատութիւնը: Ամուսնական սերը թրախուման է: Այս սերն անքակտելի ու անպաղելի կը մնայ մինչև 'ի քակտիլ և 'ի լրանալ թրախումային» («Թատրոն», թիվ 50):

«Խիստ որդեսեր մայր մը» և «Հակառակ կարծիք» ակնարկները թեպետ ֆեյլիտոն են հիշեցնում, սակայն շարադրանքով, ասելիքով որոշակիորեն տեղավորվում են նաև պոթելեմային ակնարկի ժանրային սահմաններում: Ինչպես այս երկու ակնարկներում, այնպես էլ պոթելեմային ակնարկներում, առհասարակ հեղինակը, ընթերցողի հետ զրուցելով, լրագրի ընձեռած ծավալի սահմաններում վեր է հանում հասարակության «պոթելեմները»՝ խնդրահարույց, արատավոր, պախարակելի կողմերը, ավանդույթները:

Լրագրային կարճ, դիպուկ գրառումներ են հավաքված «*Քանի մը բաներ որ մարդուն լացը կը շարժեն*» և «*Քանի մը բաներ որ մարդուն ծիծաղը կը շարժեն*» վերտառությամբ շարքերի ներքո: Հրապարակախոսական հստակությամբ և իր սրամիտ բնութագրումներով Պարոնյանը մեկ կապակցությամբ մի ամբողջ արատավոր երևույթ է մերկացնում, մարդու լացը շարժող «քանի մը բաներ».

«Հայոց արդի վիճակը,

Անհամ ու պաղ կերակուրները,

Թեթևամիտ գիտունները,

Գինետան մէջ ազնուականը, կծծի ագահ հարուստը,

Բնական ծուխը, անկէ աւելի բարոյական ծուխը,

Սոխն ու սխտորը, անոնցմէ ա՛լ աւելի ամեն բանի մէջ խառնուող տգետը...»

(«Թատրոն», թիվ 136):

Պարոնյանի գրվածքներում հրապարակախոսության և երգիծանքի հարաբերակցությունը լավագույնս կարելի է արտահայտել ռուս պոթետոր Յակով Սիմկինի հետևյալ տողերով. «Հրապարակախոսությունը չի կարող փորձարկման ենթարկել հեգնանքը: Ըստ Էուլյան այն պետք է իրերն իրենց անուններով կոչի, դա անմիջական ռեալիզմ է՝ շատ հասկացությունների հնարավորություններն ընդլայնող, միանգամայն հստակ մտքի ծաղրող ձև» (Симкин 44):

«Թատրոն» երգիծաթերթում լույս տեսած նորահայտ երկերի շարքում ժանրային յուրօրինակությամբ առանձնանում են «Հին աշխարհին Խաչիկը, Նոր աշխարհին Գաբիկը» և «Լեռը մարգարեին քովը չէրթա նե՝ մարգարեն լեռան քովը կէրթա» գործերը, որոնց ժանրը, սակայն, վերստին կոժվարանալ ստույգ ասել՝ երգիծապատում, երգիծավիպակ, դրամատիկական մանրապատում... Այ. Մակարյանը գրում է. «Հակոբ Պարոնյանը փաստորեն ստեղծել է մի երկ, որն ըստ Էուլյան չի տեղավորվում մեզ հայտնի որևէ ժանրի սահմաններում: Այն ավելի շատ **միջժանրային ստեղծագործություն է**, որին հարմար է տալ **դրամատիկական երգիծապատում** անվանումը: Հիշենք, որ նման պատումները բավականին հաճախադեպ են Պարոնյանի թե՛ սկզբնական և թե՛ հետագա շրջանների գեղարվեստական ու հրապարակագրական երկերում: Համանման կառույց ունի նաև

միևնույն շրջանում ստեղծված «Հին աշխարհին խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը» գործը: Դրանցով լեցուն են տարիներ շարունակ իր իսկ կողմից խմբագրված «Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերի կամ հետագայում գրված «Ծիծաղ»-ների էջերը» (Մակարյան 55):

Վերը նշված երկու գործում բոլոր կերպարները բացահայտվում են երկխոսությունների մեջ, հեղինակային խոսքը գրեթե բացակայում է, գործողությունների, իրադարձությունների մասին ևս ընթերցողը տեղեկանում է կերպարների երկխոսություններից: Փաստորեն այս միջժանրային ստեղծագործությունների մեջ կան ինչպես դրամատիկական, այնպես էլ էպիկական երկերին հատուկ գծեր, և այդ ամենը՝ համեմված Պարոնյանի անկրկնելի երգիծանքով:

«Թատրոն» երգիծաթերթում ինչ-որ առումով ժանրային հստակություն ունի «Նկարագրութիւն դիմաց եւ բնաւորութեանց մայրաքաղաքիս զանազան թաղերու ազգայնոց» ակնարկաշարը, որը բաղկացած է Պոլսի թաղերի բնույթը և նրա բնակիչների բնավորությունը ներկայացնող քսան ակնարկից: Սա «Պոտյոտ մը Պոլսո թաղերու մեջ» ակնարկաշարի նախնական տարբերակներից է՝ «Քաղաքական աշխարհագրութիւն»-ից հետո (Մակարյան, 65-94): «Նկարագրութիւն դիմաց եւ բնաւորութեանց մայրաքաղաքիս զանազան թաղերու ազգայնոց» ակնարկաշարը նախորդ 5 ակնարկների համեմատ բովանդակային, լեզվական և կառուցվածքային առումներով ավելի հղկված է: Փաստորեն այս ակնարկաշարը բարքերի ակնարկի՝ ֆիզիոլոգիայի օրինակ կարող էր լինել, եթե չլիներ երգիծական ընդգծված ուղղվածությունը՝ ծիծաղաշարժ երկխոսություններով, հեղինակի վերաբերմունքի ակնհայտ դրսևորմամբ, որոնք այն դարձնում են ֆիզիոլոգիայի հիբրիդային տեսակ: Հայտնի է, սակայն, որ ֆիզիոլոգիա ժանրի առաջին ստեղծագործությունները լույս են տեսել Շառլ Ֆիլիպոնի հիմնած ֆրանսիական «Լա կարիկատյուր» («La Caricature») և «Լե շարիվարի» («Le Charivari») պարբերականներում, որոնք հիմնականում երգիծական ուղղվածություն ունեին (Якимович 114-115; 157): Հի բացառվում նաև, որ Պարոնյանը ծանոթ է եղել այս պարբերականներին և հետևել ֆիզիոլոգիայի ժանրի ֆիլիպոնյան ավանդույթներին:

Եզրակացություններ

Այսպիսով՝ ամփոփելով գրվածը՝ հանգում ենք մի քանի եզրակացությունների.

1. Հակոբ Պարոնյանի՝ Կ. Պոլսի «Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերում հրատարակված նորահայտ երկերին ժանրային հստակ բնութագրումներ տալ չենք կարող. դրանցից յուրաքանչյուրը միջժանրային որևէ տեսակ է ներկայացնում:
2. Այդուհանդերձ, նորահայտ այս գործերի շարքում ակներև է երգիծաբանի ուղղվածությունը դեպի հրապարակախոսական և դրամատիկական ժանրերը:
3. Սաղմնային այս երկերից յուրաքանչյուրն արտահայտությունն է հեղինակի ստեղծագործական որոնումների, որոնց արդյունքում ծնվեցին այնքան կատարյալ և սիրված «Պոտյոտ մը Պոլսո թաղերու մեջ» ակնարկաշարը, «Մեծապատիվ մուրացկանները» վիպակը, «Քաղաքավարության վնասները» նովելաշարը:
4. Այս երկերի՝ հիբրիդային ժանրերի գործեր լինելը պայմանավորված է նաև երգիծաբանության ազդեցությամբ: Այն ինքնին ասես մի ժանր է, որը ներառում է դրամատիկական, էպիկական և որոշ դեպքերում քնարական ժանրերի առանձնահատկությունները:
5. Ինչպես Պարոնյանի մեզ արդեն քաջածանոթ երկերում, այնպես և նորահայտ այս գործերում նկատելի է մի կարևոր հանգամանք, որը, անխոս, հետագայում շատ ավելի մանրակրկիտ քննություն է ենթադրում՝ մենիպեոսյան երգիծանքի ժանրային գծերի դրսևորումն այս կամ այն չափով, այդ ժանրի ներգործությունն այս ստեղծագործությունների վրա:

Հայտնի է, որ Հակոբ Պարոնյանը հրաշալիորեն տիրապետում էր հունարենին, հունական գրականությանը և թարգմանություններ էր անում անտիկ հունական գրականությունից: Մ. Պասմաճյանը գրում է. «Կարդացած է Արիստոփանն ու Լուկիանոս, և այս վերջնոյս *Մեռելներու խօսակցութիւն* երկն հայերէն թարգմանած է, մինչդեռ *Ջոջերը* գրելու ատեն, դիմացը ունեցած կը թուի Պլուտարքոսը: Ուրիշ Յոյն մ'ալ, որ ապահովապէս իւր բաժինն ունի Պարոնեանի գրական կազմակերպութեան մէջ, Թեոփրաստն է. *Խիկարներու* մէջ «բարոյական փառաբանութիւն» խորագրին տակ հրատարակուած յօդուածները, նմանողութիւններ են յոյն հեղինակին նկարագիրներուն. միայն թէ ինք հոգեբանական վերլուծութեան տեղ յաճախ կը գործածէ խօսակցութիւնը, մոլութիւնը աւելի եւս սեւեռելու դիտմամբ շատ անգամ ալ բոլորովին կը բաժնուի յոյն հեղինակէն ու այն ատեն մոլութիւնը շարժման մէջ կը դնէ միայն» (Պասմաճեան 221-222): Լուկիանոսի՝ մենիպեոսյան երգիծանքի ժանրային տարրերով գրված «Չրույցներ մեռյալների թագավորությունում» երկը հայերէն թարգմանած երգիծաբանն աներկբայորեն կրել է այդ ժանրի հետքը և, ըստ անհրաժեշտության, կամա թե ակամա կիրառել այն իր ստեղծագործություններում: Անտիկ մենիպեոսյան երգիծանքին բնորոշ էր փիլիսոփայական ուղղվածությունը, լուրջ և երգիծական բովանդակության համադրումը, կերպարների համար երևակայական իրականության ստեղծումը (Литературный энциклопедический словарь 217):

Միխայիլ Բախտինը 1963 թվականին լույս տեսած իր «Դոստոևսկու պոետիկայի խնդիրները» գրքում (1929թ. լույս տեսած «Դոստոևսկու ստեղծագործության խնդիրները» գրքի վերահրատարակությունն է) անդրադառնում է մենիպեոսյան երգիծանքին և ներմուծում մենիպեա ժանրի հասկացությունը՝ մանրամասն թվելով նրա հատկանիշները: Ըստ այդմ՝ մենիպեային բնորոշ են սկանդալային տեսարանները, բոլորի կողմից ընդունված կանոնների և իրականության, կյանքի բնականոն ընթացքի խախտումը, օբսիմորոնի գործածությունը և այլն: Բախտինը նշում է նաև ժանրի մի էական գիծ՝ հրատապ հարցերի հրապարակումը, լուսաբանումը. այն ասես հին ժամանակների՝ օրվա կարևոր խնդիրներին անդրադարձող լրագրային ժանր լինի: Անդրադառնալով Դոստոևսկու ստեղծագործության մեջ մենիպեայի դրսևորմանը՝ նա ընդգծում է, որ գրողը մտածված չի կիրառել այդ ժանրը, այլ այդ կապը տեղի է ունեցել ինքնաբերաբար՝ այն պահից, երբ այդ ժանրը հաղորդվեց գրողի ժամանակաշրջանին: Փաստորեն մենիպեան վերակենդանացավ Դոստոևսկու ստեղծագործության մեջ (Бахтин 128-137):

Բախտինի վերլուծությունը թեպետ Դոստոևսկու ստեղծագործության մասին է, սակայն մտածելու տեղիք է տալիս Հակոբ Պարոնյանի գործերի ժանրային առանձնահատկությունների վերաբերյալ. երգիծաբանի ինչպես մեզ արդեն հայտնի, այնպես էլ նորահայտ գործերը կրում են մենիպեայի կնիքը: Վստահ կարելի է փաստել, որ Պարոնյանը ևս ոչ թե մտածված է կիրառել ժանրի առանձնահատկությունները, այլ ժանրի կանոններն օրգանիկ կերպով ներհյուսվել են նրա ժամանակի պատկերման պահանջներին: Երգիծաբանի թե՛ հանրաժանոթ, թե՛ նորահայտ երկերն ունեն մենիպեային բնորոշ լրջածիծաղային բովանդակություն. մեծապատիվ մուրացկանների խոսքերը կարդալիս լիաթոք ծիծաղին հաջորդում են դառն արցունքները, զավեշտալի, ծիծաղաշարժ իրավիճակներում հայտնված Նիկողիմոս և Խաչիկ աղաների հանդեպ ընթերցողը վերջում կարեկցանք է զգում, ցավ ապրում այն իրականության համար, որում հայտնվել են հերոսները:

Այսպես՝ հանճարեղ երգիծաբանը, ինքնաբերաբար անտեսելով ժանրերի հստակ սահմանները, ստեղծեց միջժանրային յուրօրինակ երկեր՝ իր անշփոթելի ձեռագիրը թողնելով հայ երգիծաբանության մեջ: Յ. Ճ. Սիրունին գրում է. «Հակոբ Պարոնեանն էր, որ երգիծանքը պիտի դարձներ ամենէն ազնուական սեռերէն մէկը հայ գրականութեան: Ան յայտնութիւն մը եւ երեւոյթ մըն էր, որ ասպարեզ կու գար

ծիշդ պահուն: Պոլիս որեւէ ատենէ աւելի պէտք ունէր անոր: Պարոնեան կու գար որոնելու Հայկական Բիւզանդիոնը իր ծիծաղելի կողմերուն մէջ եւ զանոնք մատնանշելու իրեն: Ամբողջ քսան տարի ան հեզնեց այդ Պոլիսը» (Սիրունի 357):

Պարոնյանը գրական սեռերի և ժանրերի գիտակ էր, շատ լավ տեղյակ էր համաշխարհային գրականության մէջ տեղի ունեցող ժանրային փոփոխություններից, նորամուծություններից, սակայն մարդուն անսահմանորեն սիրող Հակոբ Պարոնյանի համար այդ մեծ սիրուց ծնված հեզնանքի արտահայտման համար ժանրային որևէ սահմանափակում չէր կարող լինել. ի վերջո ժանր թելադրողը գրողն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Թատրոն*, Կ. Պոլիս, 1874, թիվ 50, սեպտեմբերի 26:
2. *Թատրոն*, Կ. Պոլիս, 1874, թիվ 67, հոկտեմբերի 17:
3. *Թատրոն*, Կ. Պոլիս, 1875, թիվ 136, մայիսի 10:
4. Ղուկասյան, Մարո. «Լանկա Պոսթանին. պախընճի պատուելի մը». Հակոբ Պարոնյանի նորահայտ մանրապատումը որպես «Մեծապատիվ մուրացկանները» վիպակի նախահիմք. *Գիտական Արցախ*, 4(15), «Արցախ» հրատ., Երևան, 2022:
5. Մակարյան, Ալբերտ. *Կրկին Պարոնյանի հետ*. Երևան, Անտարես, 2018:
6. Մակարյան, Ալբերտ. Հակոբ Պարոնյանի «Պտույտ մը Պոլսո թաղերու մէջ» ակնարկաշարի նորահայտ տարբերակները. «ՎԷՄ» *համահայկական հանդես*, 2 (34). Երևան, 2011, ապրիլ-հունիս:
7. *Մեղու*, Կ. Պոլիս, 1873, թիվ 127, ապրիլի 4:
8. *Մեղու*, Կ. Պոլիս, 1873, թիվ 129, ապրիլի 12:
9. *Մեղու*, Կ. Պոլիս, 1873, թիվ 151, հուլիսի 4:
10. *Մեղու*, Կ. Պոլիս, 1873, թիվ 161, օգոստոսի 8:
11. *Մեղու*, Կ. Պոլիս, 1873, թիվ 184, հոկտեմբերի 31:
12. Չարենց, Եղիշե. *Երկերի ժողովածու*, հատոր 6, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1967:
13. Պասմաճեան, Ս. Ուսումնասիրութիւն Պարոնեանի երկասիրութեանց. «*Բազմավէպ» հանդիսարան*, թիվ 5, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1900:
14. Ջրբաշյան, Էդվարդ. *Գրականության տեսություն*, 5-րդ վերամշակված և լրացված հրատարակություն. Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1980:
15. Ջրբաշյան, Էդվարդ և ուրիշներ. *Գրական ժանրեր. պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը*. Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1973:
16. Սիրունի, Յակոբ. *Պոլիս եւ իր դերը*. 3-րդ հատոր, Անթիլիաս-Լիբանան, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1987:
17. Бахтин, Михаил. Собрание сочинений в семи томах, том 6. Москва, Русские словари: Языки славянской культуры, 2002.
18. Литературный энциклопедический словарь, под ред. В.М. Кожевникова и П.А. Николаева. Москва, издательство «Советская энциклопедия», 1987.
19. Симкин, Яков. Сатирическая публицистика. Ростов-на-Дону, издательство Ростовского Университета, 1976.
20. Эльсберг, Яков. Вопросы теории сатиры. Москва, Советский писатель, 1957.
21. Якимович, Татьяна. Сатирическая пресса французской республиканской демократии 1830-1835 гг. (К истории реализма XIX века во Франции). Киев, издательство Киевского университета, 1961.
22. Якимович Татьяна. Французский реалистический очерк 1830-1848гг. Москва, издательство Академии наук СССР, 1963.

WORKS CITED

1. Bahtin, Mihail. *Sobranie sochinenij v semi tomah*, tom 6. Moskva, Russkie slovari: Jazyki slavjanskoj kul'tury, 2002. [Collected works in 7 Volumes, Volume 6, Moscow]. (In Russian)
2. Charenc, Eghishe. *Erkeri jhoghovac'uu*, hator 6. Erevan, Haykakan SSH GA hrat., 1967: [Collected works, Volume 6, Yerevan]. (In Armenian)
3. Ghukasyan, Maro. «Lanka Po'st'anin. paxy'twi patueli my'». Hakob Paronyani norahayt manrapatumy' vorpes «Mec'apativ murackannery'» vipaki naxahimq. *Gitakan Arcax* 4(15), Erevan, 2022: [The newly found short story by Hakob Paronyan "The Lanka Postani: an Honourable Predictor" as a Basis for the Novelette "The Honourable Beggars", Yerevan]. (In Armenian)
4. Jakimovich Tat'jana. *Francuzskij realistscheskij ocherk 1830-1848gg*. Moskva, Izdatel'stvo Akademii nauk SSSR, 1963. [French Realistic Sketch during 1830-1848, Moscow]. (In Russian)
5. Jakimovich, Tat'jana. *Satiricheskaja pressa francuzskoj respublikanskoj demokratii 1830-1835 gg. (K istorii realizma XIX veka vo Francii)*. Kiev, Izdatel'stvo Kievskogo universiteta, 1961. [Satirical Press of French Republican Democrats during 1830-1835, Kiev]. (In Russian)
6. Jel'sberg, Jakov. *Voprosy teorii satiry*. Moskva, Sovetskij pisatel', 1957. [Problems of the Theory of Satire]. (In Russian)
7. Jrbashyan, E'dvard. *Grakanowt'yan tesut'yun*, 5-rd veramshakvac' ev Iracvac' hratarakowt'yown. Erevan 1980. [Theory of Literature, Yerevan]. (In Armenian)
8. Jrbashyan, E'dvard ev urishner. *Grakan jhanrer. patmakan zargacumy' ev jhamanakacic vichaky'*. Erevan, Haykakan SSH GA hratarakchowt'yown, 1973: [Literary Genres: Historical Development and Contemporary State, Yerevan]. (In Armenian)
9. *Literaturnyj jenciklopedicheskij slovar'*. Pod red. V.M. Kozhevnikova i P.A. Nikolaeva. Moskva, Izdatel'stvo «Sovetskaja jenciklopedija», 1987. [Literary Encyclopedia, Moscow]. (In Russian)
10. Makaryan, Albert. Hakob Paronyani «Ptuyt my' Polso t'agheru mej» aknarkashari norahayt tarberaknery'. «Ve'm» hamahaykakan hande's 2 (34). Erevan, 2011, april-hunis: [Newly Found Versions of "A Promenade in the Quarters of Constantinople" by Hakop Paronian, Yerevan]. (In Armenian)
11. Makaryan, Albert. *Krkin Paronyani het*. Erevan, Antares, 2018: [Again with Paronyan, Yerevan]. (In Armenian)
12. Meghu, K. Polis, 1873, t'iv 127, aprili 4. [Bee, Constantinople]. (In Armenian)
13. Meghu, K. Polis, 1873, t'iv 129, aprili 12. [Bee, Constantinople]. (In Armenian)
14. Meghu, K. Polis, 1873, t'iv 151, hulisi 4. [Bee, Constantinople]. (In Armenian)
15. Meghu, K. Polis, 1873, t'iv 161, o'gostosi 8. [Bee, Constantinople]. (In Armenian)
16. Meghu, K. Polis, 1873, t'iv 184, hoktemberi 31. [Bee, Constantinople]. (In Armenian)
17. Pasmatchean, M. *Usumnasirut'iwn Paroneani erkasirut'eanc. «Bazmave'p» handisaran t'iw 5, Venetik, Surb Ghazar, 1900: [A Study of Paronyan's Works, Venice]*. (In Armenian)
18. Simkin, Jakov. *Satiricheskaja publicistika*. Rostov-na-Donu, Izdatel'stvo Rostovskogo Universiteta, 1976. [Satirical Publicism, Rostov-on-Don]. (In Russian)
19. Siruni, Yakob. Polis ew ir dery', 3-rd hator, Ant'iliias-Libanan, Tparan Kat'oghikosut'ean Hayoc Mec'i Tann Kilikioy, 1987: [Polis and its Role, Volume 3, Antelias-Lebanon]. (In Armenian)
20. T'atron, K. Polis, 1874, t'iv 50, septemberi 26. [Theatre, Constantinople]. (In Armenian)

21. T'atron, K. Polis, 1874, t'iv 67, hoktemberi 17. [Theatre, Constantinople]. (In Armenian)

22. T'atron, K. Polis, 1875, t'iv 136, mayisi 10. [Theatre, Constantinople]. (In Armenian)

THE GENRE PECULIARITIES OF NEWLY FOUND WORKS BY HAKOB PARONYAN

MARO GHUKASYAN

*Research Institute of Ancient Manuscripts
after Mesrop Mashtots, Ph.D. Student*

*The Office of the President of Armenia, Senior Specialist
Ashtarak, the Republic of Armenia*

This article is the first to examine the genre features of Hakob Paronyan's new-found works published in the satirical journals of Constantinople "Meghu" ("Bee") and "Tatron" ("Theatre").

The aim of the article is to introduce the genre characteristics of those newly found works.

The tasks of the work are genre analysis and determination of genre affiliation of newly found works by Hakob Paronyan published in the satirical newspapers "Meghu" and "Tatron". It's difficult and sometimes impossible to clearly define the genre of a satirical work, since satire includes elements of almost all literary genres. And it is especially difficult to determine the genre of the works of satirist Hakob Paronyan, who has a unique handwriting.

The analytical method was used for the research.

As a result of the research we came to the following conclusion: Hakob Paronyan's new-found works do not have a pronounced genre description, they are mainly inter-genre works, characteristic of dramatic and journalistic genres.

Keywords: *Hakob Paronyan, satirical newspaper "Meghu" ("Bee"), satirical newspaper "Tatron" ("Theatre"), newly found works, genre, dramatic genre, publicistic genre, feuilleton, short story, Menippean satire.*

ЖАНРОВЫЕ ОСОБЕННОСТИ НОВОВЫЯВЛЕННЫХ ПРОИЗВЕДЕНИЙ АКОПА ПАРОНЫЯНА

МАРО ГУКАСЯН

*аспирант научно-исследовательского
института древних рукописей
имени Месропа Маштоца,*

*старший специалист Аппарата Президента
Республики Армения
г. Аштарак, Республика Армения*

В данной статье впервые анализируются жанровые особенности тех произведений Акопа Пароняна, принадлежность его перу которых установлено недавно и которые были опубликованы в константинопольских сатирических газетах «Мегу» («Пчела») и «Татрон» («Театр»).

Цель статьи – представить жанровую характеристику этих произведений.

Задачами данной работы являются жанровый анализ и определение жанровой принадлежности выявленных произведений Акопа Пароняна, опубликованных в константинопольских сатирических газетах «Мегу» и «Татрон». Трудно, а порой невозможно конкретно определить жанр сатирических произведений, поскольку сатира включает в себя элементы почти всех литературных жанров. Особенно сложно дать характеристику жанровой принадлежности произведений Пароняна потому, что сатирик обладает своим уникальным творческим почерком.

Исследование проводилось с использованием аналитического метода.

По итогам исследования можно констатировать, что вновь выявленные произведения Акопа Пароняна не принадлежат к определенному жанру: эти произведения смешанного, «гибридного» жанра, которые сочетают в себе, в основном, черты драмы и публицистики.

Ключевые слова: *Акоп Паронян, сатирическая газета «Мегу» («Пчела»), сатирическая газета «Татрон» («Театр»), нововыявленные произведения, жанр, драматический жанр, публицистический жанр, фельетон, миниатюра, мениппова сатира.*